№ 167 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1 — 1901 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1 № 167

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ հրաւէր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Զիլանուրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանչեսկո Կրիսպի. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պետրոս Դուրեան.

ԴԱՐՁԵԱԼ ՀՐԱՒԷՐ

Կովկասեան ցուցահանդէսի գլխաւոր շինութիւնը արդէն պատրաստ է։ Մնում է այժմ գլուխ բերել ներքին կազմակերպութեան գործը, որից յետոյ կը սկսեն տեղաւորել իրերը։ Շատ տեղերից ստացված են յայտարարութիւններ, բայց իրերը կամ դեռ չեն ուղարկված և կամ ճանապարհին են գտնվում։ Ցուցահանդէսը պէտք է պատրաստ լինի օգոստոսի 20-ին։

Մի քանի բաժիններ ուշ կը բացվեն։ Այդպիսի բաժինների թուին են պատկանում կաթնատնտեսութեան, թռչնապահութեան, ձիաբուծութեան բաժինները, որոնք կը բացվեն սեպտեմբերի վերջերում և հոկտեմբերի սկզբներում։ Այդ բաժիններին մասնակցել ցանկացողները, այդ պատճառով, պէտք է ներկայացնեն իրանց արդիւնքները կամ խնամած կենդանիները՝ ցուցահանդէսի այդ բաժինները բանալու ժամանակ։

Ինչպէս յայտնի է, ցուցահանդէսի ժամանակ պէտք է տեղի ունենան մի շարք հանդէսներ և ժողովներ։ Սեպտեմբերի 20-ից յետոյ կը սկսվեն ռուսաց տիրապետութեան հարիւրամեակի տօնախմբութիւնները, որոնք կը վերջանան սեպտեմբերի 29-ին։ Հետևեալ օրը, սեպտեմբերի 30-ին, կը կայանայ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան յիսնամեայ յոբելեանի կատարումը։ Այնուհետև կը սկսվեն համագումար ժողովների նիստերը, որտեղ կը քննվեն Կովկասի գիւղատնտեսութեան վերաբերեալ բազմատեսակ խնդիրներ։

Մենք մի քանի անգամ հրաւէր ենք կարդացել մեր հասարակութեան՝ աշխատել նպաստելու ցուցահանդէսի լիակատարութեան և օգտվել դէպքից յարուցանելու և քննելու ցուցահանդէսում մեր երկրի կարիքներին վերաբերեալ կարևոր խնդիրները։ Այժմ երբ մոտենում է ցուցահանդէսի բացման ժամանակը, մենք կրկնում ենք մեր հրաւէրը։ Պէտք է օգտվել ներկայ առիթից։ Այն, ինչ որ կարելի է անել այժմ, մի քանի շաբաթվայ ընթացքում, ամիսներ և տարիներ է պահանջում ուրիշ ժամանակներում։ Ցուցահանդէսի ժամանակ քննված խնդիրները առանձին ուշադրութիւն կը դրաւեն թէ ազգաբնակութեան և թէ իշխանութեան կողմից։

Ցուցահանդէսը տեղի ունի քսաներորդ դարի սկզբնական տարում։ Աշխատենք դարի առաջին քայլերից պարզել մեր ապագայը։ Եւ այնուհետև ձեռնարկենք մշակած միջոցների իրագործութեան՝ կեանքի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Վաղուց է արդէն, որ էջմիածնի աստուածաբանները իրանց ճակատագիրը կապել են ամբողջ ազգի հետ։ Եթէ բարեկեցիկ եւ ժողովուն են այդ աստուածաբանները, դա նշանակում է, որ ամբողջ ազգանազան ազգը եւ Թորգոմի տունն է բարեկեցիկ ու ժողովուն. իսկ եթէ աստուածաբանների տգիտութիւնն ու անբարեխղճութիւնն էջ մերկացնում, իմացէք, որ դրանով զուք ամբողջ ազգն էք անարգում, ամբողջ Մայր Աթոռը, աշխարհի բոլոր սրբութիւնները։ Այսպէս է, ինչ արած։ Որ ամբողջ ազգը դժբաղդութեան անդունդների մէջ կը լինէր գահավիժված, եթէ գոյութիւն չունենային էջմիածնի ճրիակերները— այդ աւելի քան մի անհերքելի ճշմարտութիւն է՝ գոնէ իրանց աստուածաբանների եւ նրանց օրգան «Արարատի» համար։ Ահա մի փաստ էլ։ «Մշակի» մէջ տպված էր մի յօդուած Խաչատուր Աբովեանի թոռների դրութեան մասին։ Այդ յօդուածին առիթ էր տուել մի հանգամանք, որ մենք այժմ ենք հրապարակ հանում։ Վարդան Աբովեանի այրին, մանելով «Մշակի» խմբագրատունը, յայտնեց, որ իրան փող չէ տալիս Թիֆլիսի կօնսիստորիան, որ որբերը նեղ դրութեան մէջ են գտնվում։ Այդ տխուր իրողութեան ազդեցութեան տակ, մենք տպագրեցինք վերոյիշեալ յօդուածը, որի մէջ դատապարտված էր հայ ազգի անտարբերութիւնը, դատապարտված էր եւ էջմիածնի վարչութիւնը, որ անցեալներում ճեմարանի տեսչի օգնականի պաշտօն էր ստեղծել՝ պարապ մնացած իր մի սիրելիին ձրի ռոճիկ տուած լինելու համար, բայց երկար տարիներով ուսուցչութիւն արած Վարդան Աբովեանի ընտանիքին մեղք էր համարում թոշակ տալ։ Եւ ահա այդ յօդուածը առիթ է տուել «Արարատի» աստուածաբաններին հետեւեալ մարգարիտները շարել.

«Մշակ» լրագրի 107-դ համարում մեղադրանքի ու լուտանքի մի ամբողջ հեղեղ է թափած Հայոց ազգի եւ Մայր Աթոռի գլխին։

Մայր Աթոռը—դա աստուածաբանների հայաւէտ հայրենիքն է։ Թող խօսեն նրա մասին, թող նահատակներ ձեւանան, թող կուրծք ծեծեն՝ օրքան կամենում են։ Մենք այդ վայնասունի վրա ոչինչ ուշադրութիւն չենք դարձնի։ Բայց հայոց ազգի պաշտպան հանդիսանալ—սա մի այնպիսի փարիսեցիութիւն է, որից պիտի կարմրէին էջմիածնի աստուածաբաններն անգամ։ Հայոց ազգի բարեկամները զիտէք՝ ովքեր են։ Նրանք, որոնք խլում են ժողովրդի իրաւունքները, որոնք եղուիտական միջոցներով կղերական ոգի են մտցնում մեր ժողովրդական եկեղեցու մէջ, որոնք անդրադէպ քահանաների լեգէօններ են փաթաթում հայ ազգի շլինքին եւ դեռ հանդգնակութիւն են ունենում փաստաբանել, թէ տգիտութիւնը երջանկութիւն է։ Հայոց ազգի բարեկամներ են այն սեւագուխները, որոնք խռովութիւն են մտցնում ամեն տեղ, ուր ոտք են դնում, որոնք մի անտանելի անիշխանութիւն են հաստատել մեր եկեղեցական վարչութեան մէջ, մի անիշխանութիւն, որից մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում եւ որ ցոյց է տալիս, թէ ամեն ինչ խորտակվում է անդիմադրելի կերպով։ Ահա հայոց ազգի բարեկամները։ Իսկ մենք, որ չենք կարող կեղտն ու ապականութիւնը չը զատապարտել, չը մատակել անխնայ կերպով, մենք, որ ամեն օր պահանջում ենք ժողովրդական իրաւունք, պահանջում ենք խիստ օրինականութիւն, կաշառքների վերացում, պարտաճանաչութիւն, մենք, որ մեր բոլոր ոյժերով կռւում ենք կղերական կաստայականութեան դէմ,—մենք հայոց ազգի բարեկամը չենք, այլ միայն լուտանք ենք թափում նրա գլխին։ Եւ սա այն պատճառով, որ մենք խիստ ենք խօսում։ Այո, դա մեր յատկութիւնն է, բայց եւ մեր իրաւունքը։ Դուք էլ ցոյց տուէք անկեղծ ժողովրդասիրութիւն եւ ձեզ էլ կը տրվի նոյն իրաւունքը։ Բայց դուք աղաներին երկրպագել գիտէք, տոգած դրպանի համար պատրաստ էք ոտի տակ տալ ամեն սրբութիւն։ Դուք խունկ ծխեցէք, իսկ մենք կը պաշտպանենք ձեր ձեռքով զրկվածներին, ձեր կողմից արհամարհվածներին, կը պաշտպանենք ժողովուրդը, նրա սուրբ իրաւունքները, որոնց դուք չէք ճանաչում։ Շարունակեցէք դուք, կը շարունակենք եւ մենք։

Այժմ դիմենք «Արարատի» գոհարներին։

Ահա ինչ են ասում հայկական աստուածաբանները.

Թէ ինչով մեղապարտ է հայոց ազգը, որ Խաչատուր Աբովեանի թոռները իրանց հօրից հարստութիւն չեն ժառանգել եւ «պիտի ձեռք մեկնեն բարերարներին, որպէս զի ապրեն, ուտում առնեն», այդ բացատրելը մեր կարողութիւնից վեր է։

Մենք երբէք չէինք էլ կասկածում, որ ձեր կարողութիւնից վեր է մի բան հասկանալը, եթէ դա չէ վերաբերվում միաբնակութեան եւ երկաբնակութեան հարցին։ Եւ օրվհետեւ Խաչատուր Աբովեանը հեղինակութիւն չէ այդ հարցի մէջ, այլ մի վաղվռուն բանաստեղծ, որ անդադար կանչում էր ձեզ համար այնքան անտանելի «ժողովուրդ, ժողովուրդ» անունը, ուստի դուք, ի հարկէ, իրաւունք ունէք չը վրդովվել այն հանգամանքից, որ «Վէրք Հայաստանի»-ի հեղինակի թոռները ողորմութիւն հաւաքեն։ Մենք այդպէս չենք հասկանում։ Մեր խորին համոզմունքով, հայ ազգը եթէ իր երախտաւորներին կարողանում է իր յարգանքը ցոյց տալ, դա նրա կենդանութեան, առաջադիմութեան, բարեխղճութեան նշանն է. բայց երբ նոյն ազգը մոռանում է իր համար տանջվածներին, իր իսկական պարծանքը կազմողներին եւ փող է տալիս, որ վանքերում ապրեն պորտաբոյծ, հայկատակ վարդապետներ, լինեն դրանք նոյն իսկ աստուածաբանական վկայաթղթերով զարդարված,—դա միայն այն ցոյց կը տայ, որ այդ ազգը իզուր վատնում է իր բարիքը, հնադարեան քնի մէջ է ընկղմված եւ լոյս տեսնելու բախտից զրկված է։ Ինչու էք Վարդան Աբովեանին մեղադրում, որ նա հարստութիւն չէ թողել իր երեխաներին։ Մթթէ ձեր կարողութիւնից վեր է հասկանալ եւ այն, որ հարստութիւններ զիղելն էլ իր դաղտնիքներն ունի. փառք Աստուծու, հօ վանական աշխարհում վիրտուօզութեան հասցրած նրբութեամբ են հասկանում այդ դաղտնիքները։ Ինչու միամիտ ձեւանալ։ Եւ ով պիտի հաւատայ, թէ դուք այդքան անհասկացող գառնուկներ էք...

Աբովեանի թոռների հարցից յետոյ աստուածաբանները բռնում են բժ. Վահան Արծրունու օձիքից։ Այս հարցն էլ, արծարծված է «Մշակում», եւ նրա էութիւնն այն է, որ էջմիածնի տպարանը ժողովրդի համար գրքեր չէ տպագրում։ Մենք լուսաբանել էինք այս իրողութիւնը, իսկ բժ. Արծրունին փաստերով ապացուցել էր, որ էջմիածնի աստուածաբանները անպէտք են նոյն իսկ իրանց բազմածախս միջնորդներով եւ մուրացկանութեամբ բացած տպարանի միջոցով ժողովրդին ծառայելու գործում։ Այժմ աստուածաբանները բարկացել են պ. Արծրունու վրա այնքան, որ նոյն իսկ չեն բարեհաճում հաւանել նրա գրական գործերը (աստուածաբանական յանդգնութեան ամենափայլուն մի վկայական. զարմանալու տեղիք էլ չը կայ։ Զարլզ Դարվինին գրչի մի հարուածով ոչնչացնող աստուածաբանների համար ինչ դժուարութիւն է ոչինչ համարել մեր հասարակական գործիչների ետեւից։ Այս մոռացկոտութիւնը եւ աններելի անտարբերութիւնը կրկնակի վրդովեցուցիչ է մանաւանդ այն պատճառով, որ մեր ներկայ կեանքն առհասարակ չափազանց խղճուկ է, ողորմելի, իսկ գրականութիւնը հետզհետէ անապատանում է։ Գոնէ թող այս տխուր իրականութիւնը դրդէր մեզ թօթափել մեր մեռած գործիչների վրայից մոռացութեան քողը, մի քիչ յարգանքով վերաբերվել դէպի նրանց յիշատակը եւ, որ գլխաւորն է, գէթ առիթ ունենալ ծանօթանալու, թէ ինչ են եղել նրանք մեզ համար, եւ այս ի հարկէ ոչ այն թուլամորթ պարծենկոտութեամբ, որով փայլում էր սագերի կչկչոցով ազատված Հռովմի այլասեռված սերունդը, այլ գիտակցական յարգանքով, ինքնաճանաչ պարծենկոտութեամբ,—առաքինութիւններ, որոնք ընդունակ են երբեմն կենսունակ դրդումներ առաջացնել, լճացած կեանքը յուզել, փոթորկել, անապատ գրականութեան մէջ ջրառատ օազիսներ ցայտեցնել։

Բայց մենք իզուր, մինչեւ իսկ ակամայ ենք քրքրում մեր հասարակական կեանքի վիրալի արտայայտութիւններից մէկը, այն պարզ պատճառով, որ մեզ թուում է, թէ երբեմն հիանդութեան անունը տալուց եւ նկարագիրն անելուց աւելի կարեւոր է դեռ հիւանդութեան դէմ մաքառել։ Մեր խօսքն այսօր, թէեւ մի փոքր ուշ, մեր վաղամեռիկ բանաստեղծ Դուրեանի յիշատակին է նուիրված։ Անցնենք ուրեմն այդ խնդրին։

Ներկայ տարվայ մայիսի 20-ին լրացաւ մեր նշանաւոր բանաստեղծի՝ «Նոճեաց աղջի», «Դաշնակաց բունի», «Մտերմաց դալկահարի» ծննդեան յիսնամեակը, որից դժբաղդաբար նրան միայն քսան գարուն էր վիճակված վայելել։

Դուրեանին մենք «նշանաւոր» ենք համարում, ի հարկէ, միայն հայկական աստիճանացոյցով, հոգեկան եւ մտաւոր այն միջավայրի եւ մթնոլորտի ծաւալով, ուր նա ծնվեց, չընչեց եւ մեծացաւ։ Անկասկած նա բանաստեղծական այն բացառիկ հանճարներից չէր, որոնցից ամենամեծի՝ Գէօթէի վերաբերմամբ նկատում է իր համահանճարեղ (congenial) ընկերը՝ Շիլլէր—«օրօրոցումն արդէն նա մի հերոս էր»։ Մի մեծ մարդու այս կիսաբանաստեղծական եւ կիսահոետորական արտայայտութիւնը որքան էլ յարմարի «բանաստեղծների արքային»—ասում ենք, հայկական միջնավայրի ծնունդ՝ բանաստեղծ Դուրեանին երբէք չէ կարելի վերագրել. այդ դեռ բաւական չէ—ծիծաղելի կը լինէր եւ բառը իզուր գործ դնել՝ եթէ մենք նրան «հանճար» համարենք։

Իր մանկութեան եւ պատանեկական սկզբնական շրջանում փոքրիկ Պետրոսը փայլում էր կայտառ, զուարթ եւ կատակասէր բնաւորութեամբ։ Բայց լինելով աղքատ ծնողների զաւակ՝ նրան վիճակված էր մատաղ հասակից սկսել կրել իր քնքոյշ ուսերի վրա կեանքի դառնութեան եւ զրկանքների ճնշող լուծը. դեռ իր դպրոցական ուսումը չաւարտած՝ ծնողների թշուառ վիճակը իր կարողութեան չափով ամօքելու համար—նա պարապում է երբեմն սեղանաւորութեամբ, երբեմն մանաւոր դասերով եւ նոյն իսկ դերասանութեամբ, որ, ըստ իր պատանեկական հակացողութեան, այնքան էլ դովելի մի զբաղմունք չէր։ Երկնային այն կայծը, որով հագեցված էր նրա սիրտը՝ հանգիստ չէ տալիս նրան,—հրդեհված հուրը պէտք է բռնկվի, բոցավառվի, եւ ահա նա այդ տարբեր զբաղմունքների հետ զուգընթաց՝ 13 տարեկանից սկսած գրում է եւ բանաստեղծութիւններ։

Բայց Դուրեանը իր վերին աստիճանի զգայուն եւ բանաստեղծական բնաւորութեամբ, մեղմ եւ տպաւորվող հոգով, սրտի փխրուն եւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(Ծննդեան յիսնամեակի առիթով)

„Meine Jugend war nur weinen,
Und ich kannte nur den schmerz;
Jede herbe Not der Meinen
Schlug an mein empfindend Herz“.
Fr. Schiller.

I

Եւրոպական հաւասարեա բոլոր ազգերը իրանց նշանաւոր գրական, ինչպէս եւ հասարակական տարբեր գոյնի գործիչների ծննդեան կամ մահվան տարեդարձը յիշատակելից յարգանքների, շատ անգամ մինչեւ իսկ մեծ տօնախմբութիւնների առարկայ են դարձնում։ Իսկ մեր կեանքում այս գովելի սովորութիւնը տարաբաղդաբար մի հազուադէպ, բացառիկ երեւոյթ է։ Ժամանակի անիւը իր ծանծաղ, անսրընթաց պտոյտներովն անգամ թանձրացնում է մոռացկոտութեան այն քողը, որ մենք, հայերս, մի պաղարիւն անտարբերութեամբ սիլում ենք սփռել մեր թէ գրական եւ թէ

կրելի բժշկին)։ Մենք համարեա ոչինչ չը հասկացանք «Արարատի» այդ բացատրութիւնից։ Եւ հարկաւոր էլ չէին երկար ու բարակ բացատրութիւնները. աստուածաբանները յայտարարում են, թէ Էջմիածնի տպարանը «մի առեւտրական հաստատութիւն է» եւ «ձրի կամ անհաչիւ կերպով երբէք» գործ չի կատարի։ Պրծաւ գնաց. ամեն ինչ ասված է այս խօսքերի մէջ։ Անձնապէս մենք ինքներս այլ եւս ոչինչ ասելիք չունենք. եթէ կամենում էք, մենք նոյն իսկ կը ցանկանք, որ Էջմիածինը շատ առեւտրական հաստատութիւններ ունենայ։ Եթէ աստուածաբանների բերանով առաջին անգամ քարոզվող այս «առեւտրական հաստատութիւնները» մի առանձին մխիթարութիւն չը լինեն Էջմիածնի ծակծակոտ, միշտ լալկան ու մուրացիկ սնդուկի համար, գոնէ շատ կուրախացնեն այդ սընդուկի մէջ վազվզող մկներին...

Ի դէպ։ Քանի որ խօսքը Էջմիածնի դատարկախօս աստուածաբանների, իրանց գոյութիւնը զանազան ճռնչոցներով բէկլամ անող այդ վեղարաւորների մասին է, բերենք մի կտոր Կ. Պոլսի «Սուրհանդակ» լրագրի նոր ստացված համարից։

Ահա.

«Մայր աթոռի ճեմարանէն ընթացաւարտ եղողներուն համար կուսակրօնութիւնը պարտաւորիչ չէ։ Ճեմարանը հաստատված ատեն, հիմնադիրը նկատողութեան առած է որ ռուսահայերը ամուսնացեալ եկեղեցականներու եւ ուսուցիչներու ալ պէտք ունին. հետեւաբար ազատ թողած է կուսակրօն ըլլալու պայմանը. բայց այս ազատութիւնը այնքան ընդարձակ սահմանի մէջ գործադրուեր է որ, ամեն տարի նուազ թուով ճեմարանաւարտներ վիճակ առած են։ Սակայն ցաւալի է որ, կրսեն, երթալով կը մարի կուսակրօն դառնալու ձգտումը, ինչպէս այս տարի ընթացաւարտներէ ոչ մէկը կուսակրօն ըլլալու յօժարութիւն յայտներ է, հակառակ վարժարանի տեսչին, իր օգնական եւ 4 ուսուցիչներու եկեղեցական ըլլալուն եւ աստուածաբանական ուսման՝ թէ ժամերու քանակութեամբ եւ թէ իր ճիւղերով անհամեմատ աւելի մեծ տեղ գրաւելուն։ Կարեւոր եւ դիտելի պարագայ մըն է այս արդեօք տեսուչը եւ ուսուցիչները՝ որոնք հայալսարանական զարգացում ստացած են՝ չեն կրնար հաճելի ընել այդ ուսումները, թէ ուրիշ պատճառներ կան, մինչդեռ ճեմարանէ զարգացեալ վեղարաւորներ կը սպասուին, որոնք նոր փոփոխութիւն մը, նոր կեանք մը պիտի բերեն ռուսահայ եկեղեցականութեան մէջ, եւ. կղերին նկատմամբ եղած յոռի ըմբռնումները պիտի ուղղեն։ Կը հաւատան որ այն թուականներուն երբ տեսուչները աշխարհական անձերուն երբ տեսուչները մէջ այսքան եկեղեցականներ չկային, թուով աւելի շատ կուսակրօններ հասած են ճեմարանէն։

Վիկտոր Հիւգօն մի տեղ հարց է տալիս. «Հաւատ, ո՞վ սպանեց քեզ»։ Եւ հաւատը պատասխանում է.—«Քահանան»...

ՆԱՄԱԿ ԶԻԱՏՈՒՐԻՑ

—

Յուլիսի 20-ին

Տեղիս մարգանեց արդիւնաբերողների մասնաժողովը մօտերս մի գովելի եւ համակրելի քայլ արեց, հիմնելով երկու հասարակական հիմնարկութիւններ—ակմբանոց եւ ժողովրդական թատրոն, որի բեմը մեծ զարկ պիտի տայ ժողովրդի մտքի զարգացման։ Արդէն վերոյիշեալ թատրոնում տրվեցին մի քանի վրացերէն ներկայացումներ, որոնք անցան բաւական աջողով եւ ամեն անգամին էլ թատրոնական դահլիճը լեփ լեցուն էր լինում մեծ բազմութեամբ։ Տոմսակների գները չափից դուրս էժան են նշանակված։ Թատրոնական բեմի գոյութիւնը պահելու համար՝ վերոյիշեալ մասնաժողովը յատկացրեց 5000 ռուբլի, իսկ ակմբանոցի համար՝ 3000 ռուբլի։

Ի դէպ, մի քանի խօսք էլ այստեղի մարգանեցի կապալառուներից նոր կազմակերպվելիք ընկերութեան մասին։

Այժմ տեղիս «Союзъ» ընկերութեան անդամ պ. Դաւիթ Բակրաձէն բանակցութիւն է սկսել Բերլինում պ. Պաւել Բոզենբերգի հետ, որը Բերլինի կապիտալիստներից մի ընկերութիւն պիտի կազմակերպէ, որոնց մէջն է եւ յայտնի ֆինանսիստ՝ պ. Հիրշ։ Ցիշեալ ընկերութիւնը պիտի գնէ այստեղի կապալառուներից նոր կազմակերպվելիք ընկերութիւնից տարեկան 12,000,000 պուդ մարգանեց՝ 10 տարվան պայմանով։

Յուլիսի 17-ին, 18-ին եւ 20-ին՝ վերոյիշեալ թատրոնական դահլիճում, մարգանեց արդիւնաբերողների խորհրդի նախագահ՝ պ. Զդանովիչի նախագահութեամբ՝ կայացան մի քանի ժողովներ, որտեղ կարդացվեցին այդ ընկերութեան պայմանները, որոնք հետեւեալներն են. 1) ընկերութեան մասնակցողը իրաւունք չը պիտի ունենայ հակառակ ընկերութեան ապրանք ծախելու. հակառակ պարագայում տուգանքի պիտի ենթարկվի. 2) ամեն մի անդամ նախավճար պիտի տանայ Բերլինի ընկերութիւնից. 3) ապրանքը շատ մաքուր պիտի պատրաստվի, այնպէս որ անպայման 48%—50% պիտի տայ. 4) այժմեանից մարգանեցի պուդը 7 կոպէկով պիտի ծախեն. 5) Փոթիում կամ Բաթումում պիտի քննվի մարգանեցը. եթէ գոհացուցիչ լինի, այն ժամանակ աւելի գին պիտի նշանակվի։

Արդէն մինչեւ օրս 200-ի չափ կապալառուներ ստորագրեցին պայմանագրութեան։ Մի օր առաջ տեղս եկաւ Բերլինից պ. Հիրշի ներկայացուցիչը եւ հետազօտեց «Союзъ» ընկերութեան մարգանեցի պահեստի կոյտերը, եւ երկու երեք պուդի չափ մարգանեց հետը տարաւ անալիզ անելու համար։

Նոր կազմակերպվելիք ընկերութիւնը բաւական երկիւղ է ազդում մի քանի խոշոր արդիւնաբերողներին եւ արտահանողներին, մանաւանդ նրանց, որոնք ժամանակին մեծ քանակութեամբ ծախել են Եւրոպայում։ Եւ ահա այսպիսով մեծ յուզում է առաջացել այստեղի վաճառականների մէջ, որովհետեւ կապալառուների երեք քառորդը, կապվելով յիշեալ ընկերութեան հետ, մնացածները չը պիտի կարողանան գոհացում տալ նրանց պահանջներին։

Բայց չենք իմանում՝ նոր կազմակերպվելիք ընկերութիւնը որքան օգուտներ եւ որքան յարատեւութիւն պիտի ունենայ։ Սրանից 2 տարի առաջ էլ տեղիս մարգանեց արտահանող՝ պ. Ֆօրուտի նախաձեռնութեամբ, այսպիսի մի ընկերութիւն հիմնվեց, բայց դժբաղդաբար 3 ամիս գոյութիւն ունեցաւ... Ցոյս կայ, սակայն, որ այժմեան նոր կազմակերպվելիք ընկերութիւնը, սկզբից հաստատ հիմքերի վրա յենվելով, պիտի կարողանայ յարատեւել մինչեւ պայմանված ժամանակը եւ այսպիսով պիտի կարողանայ մեծ զարկ տալ մարգանեցի արդիւնաբերութեան եւ արտահանութեան։

Սպասենք եւ տեսնենք։ Ստ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յուլիսի 27-ին

«Մշակի» № 157-ի մէջ հայոց եկեղեցական երգեցողութեան մասին Վ. Ասրեանի՝ Աստրախանից գրած նամակը առիթ է տալիս ինձ մի քանի նկատողութիւններ անելու։

Յօդուածագիրը գրում է, ի միջի այլոց.

1) «Ակնատեսը յաճախ պատահում է Եկմալեանի կամ Կարա-Մուրզայի եղանակները աղաւաղված...» Նախ՝ մենք, ես եւ Եկմալեանը, սեփական յօրինած եղանակներ չունենք, այլ վերցրել ենք երգված եղանակներ։ Եւ երկրորդ, 1898-ից՝ ես իմ ներդաշնակած պատարագը չեմ տալիս ոչ ոքի եւ արգելում եմ նրան սովորեցնել։

2) «Որի՞ ներդաշնակութիւնն է ընդունված...» Եկմալեանի պատարագի մասին ես իմ նպաստաւոր կարծիքը յայտնել եմ «Մշակում» 1898-ին, ուր չեմ գրել ոչ մի համեմատութիւն իմ գրածի հետ։ Այն ժամանակ ընդունված եւ տարածված էր իմ գրածը, բայց, ենթարկվելով քմահաճութեան, ընդհատվեց եւ նրա փոխարէն հրատարակվեց տարածել միւսը։

3) Խմբապետները վստահանում են նոյն իսկ պատճառաբանել, «որ Եկմալեանի ներդաշնակութիւնը յարմար չէ, մատչելի չէ ժողովրդին»։

Այդ տեսակ կարծիք՝ չը գիտեմ, ով կարող է յայտնել։ Ինչ վերաբերում է իմ պատրաստած խմբապետներին, պահանջեցէք նրանցից իմ տուած վկայականը եւ կը տեսնէք, որ առաջին պայմանն է Եկմալեանի պատարագը սովորեցնելը։

4) «Եկմալեանի մեթոդով առաջնորդվող խմբապետը պէտք է լինի կամ երկար ժամանակ հեղինակին աշակերտած, կամ կօնսերվատորիայից աւարտած, այլապէս դժուար է սպասել, որ քառաձայն երգեցողութիւնը կանոնաւորվի մեր մէջ»։

Այս կարծիքներով արդէն պարզվում է, որ յօդուածագիրը ոչ երաժիշտ է, ոչ երաժշտական աշխարհում եղել է եւ ոչ ծանօթ է գործին։ Նախ՝ մեթոդ չէ, որ տալիս է Եկմալեանը, այլ ներդաշնակած, գրած եւ հրատարակած մի երկ, որը կարելի է սովորեցնել զանազան մեթոդներով եւ հասնել նպատակին։ Երկրորդ՝ շատ սխալ կարծիք է, որ հեղինակից եւ կօնսերվատորիայից դուրս չը կայ փրկութիւն։ «Զիք փրկութիւն» ասել անցնել ոչ այնքան հեշտ է եւ ոչ ներելի։ Մի՞թէ չէք լսել, որ հանճարեղ երաժիշտ հեղինակ Ռուբինշտէյնը իր յայտնի «Դեմոն» օպերան կառավարելը սովորեց դիրիժեօր Նապրավնիկից։ Ընդհակառակն՝ ընդունված կարծիք է, որ հեղինակները բոլորովին անընդունակ են սովորեցնելու իրանց երկերը։ Ինչ վերաբերում է կօնսերվատորիա աւարտողին, նա կարող է լինել ազող եւ անաջող խմբապետ, եւ մինչեւ անգամ ստոր այն խմբապետից, որ չը նայած իր փոքր գիտութեան, ունի բնական ընդունակութիւն եւ տոկուն աշխատասիրութիւն։

Ուրիշ բան է, եթէ յօդուածագիրը հարց առաջարկէր՝ թէ ինչումն է չարիքը, որ մենք չունենք լաւ խմբեր։ Դրան կարելի էր պատասխանել շատ բազմակողմանի կերպով...

Միջոցներ շատ կան, որ «քառաձայն երգեցողութիւնը կանոնաւորվի մեր մէջ»։ Օրինակ՝ դնել եկեղեցում օրգան կամ ֆիսհարմօն գործիքը եւ նրա դաշնակցութեամբ երգել թէկուզ ամենափոքր խմբով։ Կամ լարային գործիքներից—մեծ եւ փոքր ջութակներից կազմել կվարտետ (չորս ձայն) եւ միացնել նրան խմբի հետ, եւ այլն, որ կը լիներ աւելի նպատակայարմար։

Ի վերջոյ, յօդուածագիրը ասում է. «Լաւ կը լինէր այդպիսի (անձեռնհաս) մարդկանց իրաւունք չը տրվէր խմբապետական պատասխանատու դերի մէջ մուտք գործել»։

Ես դրա հետ բոլորովին համաձայն եմ։ Բայց չեմ կարող ոչ մի կերպ համաձայնվել, որ ամեն պատահող վեր կենայ եւ մասնագիտութեան մասին կարծիքներ գրի։ այն էլ այդպիսի վճռողական ձեւով, ու հասարակութեան մոլորութիւն պատճառի։

Կարա-Մուրզա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Բազմավէպը» հրատարակել է հետեւեալը. «Նոր տոմարի սեպտեմբեր 8-ին պիտի կատարուի Վենետկոյ Մխիթարեան ուխտիս երկհարիւրամեայ յօբելեան հանդէսը՝ որ պիտի տեւէ երկու օր։ Առաջին օր. 1) Առաւօտեան ժամը 10½-ին ուխտիս գեր. աբբահայր տ.տ. Իգնատիոս Վ. Կիւրեղեան պիտի պատարագէ երաժշտական գործւով եւ խմբերգով։ 2) Պատարագէն վերջը երաժշտական խումբը պիտի երգէ «Զքեզ Աստուած» քառաձայն գոհաբանական աղօթքը։ 3) Կէսօրին ժամը 2-ին ամբողջ հրաւիրելոց պիտի տրուի մեծ ճաշ։ 4) Ճաշկերոյթի ժամանակ պիտի կարդացուին ողջոյնաւորներ, նամակներ, հեռագիրներ, եւ պիտի բաժնուի Մխիթար աբբահօր մետալը։ 5) Երեկոյեան, լուսավառութիւն. վանքին քառանկիւնը պիտի զարդարուի վենետկեան յատուկ գունագեղ լապտերներով։ Երկրորդ օր. 1) Առաւօտեան ժամը 10-ին ուխտիս գեր. աբբահայր պիտի բանայ ակադեմական հանդէսը։ 2) Աւագ քահանաներէն մին պիտի կարդայ հաստատ ատենաբանութիւն մը։ 3) Երաժշտական խումբը պիտի նուագէ յատուկ երգեր։ 4) Ընդ մէջ երգերու պիտի կարդացուին մաղթանքներ, հեռագիրներ եւ նամակներ։ 5) Հրաւիրեալ հանդիսականաց պիտի տրուի «Մխիթար» անուամբ բացառիկ պատկերազարդ գիրք մը։ 6) Կէսօրին ճաշ։ 7) Երեկոյեան՝ հանդիսապէս հիմնարկութիւն Մխիթար աբբահօր կանգնուելիք արձանին եւ ապա երկարատեւ առաջնակարգ վենետկեան հրախաղութիւն»։

—

Կովկասեան ցուցահանդէսի գլխաւոր պավիլիոնի շինութիւնը արդէն վերջացած է, եւ այսօրվանից, օգոստոսի 1-ից, նրա մէջ կը սկսվեն առարկաների դասաւորութեան աշխատանքները։

—

Առաջիկայ աշնան Ռուսաստան է գալու ամերիկացի գրող Սամուէլ Կլէմէնս, որ աւելի յայտնի է Մարկ Տվէն կեղծանունով։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը մի շրջաբերականով առաջարկել է նահանգապետներին միջոցներ ձեռք առնել, որ միջնակարգ դպրոցները բէֆորմի ենթարկելու հարցը ամենեւին բացարձակ քննութեան առարկայ չը դառնայ քաղաքային խորհրդարանի նիստերում։

—

Օգոստոսի 11-ին գործադրութեան մէջ կը մտնի առանձին պակասեցրած տարիֆ այն աշակերտների համար, որոնք կրթական նպատակով ուղեւորութիւններ են կատարում երկաթուղիներով դէպի պետութեան զանազան մասերը։ Արտօնութիւնները, որ երկաթուղիները պէտք է տան այս նպատակով ճանապարհորդող աշակերտներին, իսկապէս կայանում են նրանում, որ բարձրագոյն, միջնակարգ եւ ստորին դպրոցների ուսանողներն ու աշակերտները իրաւունք կունենան ուղեւորութիւններ կատարել III-րդ կարգի վագոններում այն վճարով, որ առնվում է այժմ

քնքոյշ լարերով՝ անկարող էր կեանքի կուի ահարկու դաշտում զէնքեր կոփել իր համար. նա անզօր էր իր հաւատարակշռութիւնը երկար պահպանել. կեանքի թշուառութեան եւ տառապանքի լեղին շատ փութկոտ կերպով թունաւորեց նրան՝ թէ մարմնապէս եւ թէ հոգեպէս։ Նա կորցնում է իր կայտառ եւ զուարթ բնաւորութիւնը. այտերի վարդը գունատվում, դալկանում է, ճակատը վշտի խորշոմներով ակօսվում, սեւ, արտայայտիչ աչերի փայլը մարում, մելամաղձոտ հայեացքը խորունկանում,—իբրեւ մի գիշերային երազ՝ նրա «գոգած կրծքի» վանդակում բոյն է դրել «քանաստեղծական հիւանդութիւնը», հիւծախտը... Նա օրեցօր ծիւրվում, հալուժաչ է լինում եւ ահա քսան տարին դեռ նոր բոլորած՝ սոսկալի ախտի ճիրաններում, 1872-ի յունվարի 20-ին, կտրվում է նրա կեանքի թելը. իր մտերիմ ընկեր՝ Լուիֆեանի նման նա էլ գնում է «երկնքի դժգոյն որդի» դառնալու։

II

Դուրեանը թողել է 36 քնարերգական բանաստեղծութիւններ, 9 տպված եւ մասամբ անտիպ թատերագրութիւններ, մի պատմուածք եւ նամակներ՝ ուղղված իր ընկերներին եւ բարեկամներին, որոնք նրա կեանքի եւ բանաստեղծական նկարագրի նկատմամբ շատ թանգագին նիւթեր են ամփոփում։

Մեր նպատակն է ներկայ յօդուածում բնորոշել Դուրեանին իբրեւ լոկ քնարերգու բանաստեղծի, որովհետեւ բանաստեղծութեան այս սեռումն ենք մենք տեսնում նրա տաղանդի խոշորութիւնը եւ գրական մնայուն մեծութիւնը։ Նրա թատերական գրվածներն ընդհանրապէս այնքան անկատար, այնքան խակ եւ տղայամիտ են թէ նիւթի եւ թէ ձեւի տեսակէտից, որ անկարող են որ եւ է լուրջ քննադատութեան դիմանալ,—չը կան նրանց մէջ ոչ դրամատիկական արուեստ, տեխնիկա եւ ոչ հոգեբանական մանրազնին շարժառիթներով շղթայված գործողութիւններ, այլ պատմուածք, հռետորութիւն, քնարերգական տարր, կամայական եւ արուեստական շաղկապումներով առաջացրած տեսարաններ, որոնք քնարերգական, գուցէ եւ վիպասանական արուեստի մէջ թոյլատրելի են, իսկ դրամատիկական բանաստեղծութեան մէջ—երբէք։

Պօլսահայ նորածին թատրոնը յիրաւի գուցէ իր դէկօրացիաներով եւ բոմանտիկական բռնադակութեամբ փայլող խաղերով՝ Դուրեանի նման մի զգայուն պատանու մեծ դրդումներ է տուել. նա իր առաջին թատերական գրուածքի առաջաբանում—այն ժամանակ, երբ նա դեռ 13 տարեկան էր—խոստում է մինչեւ անգամ թատրոնի եւ կեանքի մէջ եղած յարաբերութեան եւ առաջինի ունեցած հասարակական կրթիչ նշանակութեան մասին,—նա իր այս տեսական դատողութիւնների մէջ ռէալիստ է, համարեա նոյն իսկ նատուրալիստ, այն ինչ իբրեւ թատերագրող՝ բոմանտիկ։ Բայց մեզ թւում է, որ նրա թատերագրութիւնների մեծամասնութեան վրա պէտք է նայել ոչ թէ իբրեւ գեղարուեստական ստեղծագործութիւնների, այլ իբրեւ ապրուստի միջոց հայթայթելու մի զբաղմունքի վրա. ճիշդ այնպէս, ինչպէս դերասանութիւնը, թատերագրութիւնն էլ նրա համար ոչ թէ ինքնանպատակ բան է եղել, այլ առժամանակեայ միջոց։ Միւս կողմից ի նկատի պէտք է ունենալ, որ նրա մտաւոր հորիզօնը այնքան լայն չէր, կեանքի փորձառութիւնները շատ չնչին՝ այնպէս որ հոգեբան-դրամատուրգ դառնալու համար նա դեռ ոչ տեսական եւ ոչ գործնական մի դպրոց էր անցել։ Այս արտաքին հանգամանքներին միանում է եւ մի ուրիշ կարեւոր արգելառիթ, որի հիմքը Դուրեանի բանաստեղծական խառնուածքի եւ բընախօսական կազմութեան մէջ պէտք է որոնել. նա ի բնէ քնարերգու էր, բայց ոչ դրամատուրգ. լիրիկական զեղումների թափը, բուսական ապաւորութիւնների տարափն՝ այնքան ուժգին, այնքան յախուռն էր, որ հոգեբանորէն նրան միանգամայն անհնարին էր կենտրոնանալ եւ ներքին, յաջորդական կապակցութեամբ շղթայաւորված մի երկ ստեղծագործել. այն բանաստեղծը, որ երեւոյթները իր անհատականութեան կամ՝ աւելի ճիշդ եթէ ասելու լինենք՝ իր տպաւորվող եւ խիստ զգայուն բնոյթի գոյներովն է բիւրեղացնում—նա չէ կարող լաւ դրամատուրգ լինել։ Ահա այս է պատճառը, որ Դուրեանի թատերական գրուածքներում, մի ինքն ըստ ինքեան հասկանալի զուգադիպութեամբ, ամենաաջող հատուածները սովորաբար մենախօսութիւնները եւ լիրիկական զեղումներով լի տեսարաններն են։

Վ. Նալբանդեան

(Կը շարունակվի)

փոքրահասակ (մինչեւ 10 տարեկան) երեխաներից, եւ որ կազմում է հասակաւորների վըճարի մի քառորդը միայն։ Բացի սրանից, ժողովրդական դպրոցների աշակերտներին իրաւունք է տրվում ձրիաբար ճանապարհորդել այն դէպքերում, երբ նրանք կրթական ուղեւորութիւններ են կատարում դէպի իրանց ծննդավայրի շրջակաները։ Այս տեսակ ճանապարհորդութիւնների կատարման վերաբերմամբ դպրոցական եւ երկաթուղային վարչութիւնների մէջ նախօրօք պէտք է համաձայնութիւն կայացնվի եւ առաջուց որոշվեն ուղեւորութեան ժամանակը, ուղեւորների թիւը եւ ի նկատի եղած նպատակը։ Աշակերտներին ուղեկցող ուսուցիչներն ու վերակացուներն եւս իրաւունք ունեն վճարել իրանց տոմսակների գինը պակասեցրած տարիֆով։

—

Քաղաքացիական ծառայութեան վերաբերմամբ կազմած նոր կանոնադրութեամբ, ինչպէս հաղորդում է «С.-П. Вѣд.» լրագիրը, վերացվում է մինչեւ այժմ գործադրվող այն կարգը, որով աստիճաններ (чины) տրվում էին բարձրագոյն դպրոցներում աւարտողներին՝ հիմնվելով նրանց դիպլոմների վրա։ Սրա փոխանակ, բարձրագոյն դպրոց աւարտողները կամ համապատասխան քննութիւն բռնողները, իրանց առաջարկված ծառայութեան հետ բաւականաչափ ծանօթանալուց յետոյ, կը ստանան անմիջապէս բարձր պաշտօններ, այսինքն այն անձինք, որոնք վերջացրել են իրանց ուսման ընթացքը որ եւ է գիտական աստիճանով կամ առաջին եւ երկրորդ կարգի դիպլոմներով, կը ստանան պաշտօններ մինչեւ VIII կարգը, մագիստրոսներն եւ դոկտորի աստիճան ունեցողները—մինչեւ VII կարգը, իսկ պրոֆէսորները—մինչեւ V կարգը։ Նախկին սահմանափակումները հրէաների վերաբերմամբ մատդրութիւն կայ թողնել անփոփոխ։

—

ԶԱՐԴԱԽԼՈՒ գիւղից (Գանձակի նահանգ) մեզ գրում են. «Այս տարի էլ անցեալ տարիների պէս անբաւարար էր հունձը։ Ոմանք այժմեանից առնում են տարվայ պաշարը, թէեւ պարտքով։ Յուլիսի 25-ի գիշերը յորդ անձրեւ եկաւ եւ զովացրեց երկիրը»։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Տեղիս քաղաքային գրադարան-ընթերցարանում կատարեալ անկարգութիւն է տիրում։ Ընթերցարան յաճախողը չէ կարող հանգիստ նստել ու մի բան կարդալ։ Ցանկարծ տեսնում ես, ուսանողները կամ քաղաքիս ըէալական կամ թեմական դպրոցի աշակերտները աղմուկով ու կռիվներով յատակին զարկելով մտնում են ընթերցարան եւ խմբվելով այստեղ-այնտեղ սկսում են բարձրաձայն խօսել կամ ծիծաղել, այնպէս որ ընթերցողը կարդալու կարողութիւնից զրկվում է։ Պէտք է ասել, որ պ. գրադարանապետը ոչ մի նախազգուշական միջոցի չէ դիմում, այլ հէնց ինքը առիթ է տալիս բարձրաձայն խօսելու եւ ծիծաղելու։ Կարծես թէ՝ խօսողին զգուշացնելը համեստութիւնից դուրս մի բան է։ Որքան մենք գիտենք, ուրիշ քաղաքներում թղթի վրա գրած կամ տպած է լինում այս պէս՝ «Խնդրում ենք բարձրաձայն չը խօսել» եւ կախած ընթերցարանի պատից, որ ստիպում է յաճախորդին բարձրաձայն խօսելուց զգուշանալ։ Խորհուրդ կը տայինք պ. գրադարանապետին դիմել այդ միջոցին, որով ազատած կը լինի մեզ այդ տեսակ բարձրաձայն խօսողներից»։

—

ՔԱՆԱՔԵՌԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 7-ին, երեկոյեան ժամի 6-ից մի քիչ անց, երկինքը ամբողջապէս ծածկվեց սեւ ամպերով եւ տեղաց կարկուտ, այստեղ չը տեսնված մեծութեամբ։ Երկնքից թափվում էին սառոյցի կտորներ՝ ընկոյզի մեծութեան եւ աւելի։ Բարեբաղդաբար, կարկուտը տեւեց հինգ րոպէից ոչ աւել, եթէ ոչ ահագին վնասներ կը հասցնէր։ Կարկուտից յետոյ սկսվեց յորդ անձրեւ, որ տեւեց մի ժամից աւելի եւ զովացրեց այրված հողը։ Հէնց այդ օրից եղանակը սաստիկ փոխվեց. ցերեկը շատ հով է լինում, իսկ գիշերները նոյն իսկ ցուրտ։ Եթէ այսպէս շարունակվի, մեր գիւղի խաղողները բոլորովին չեն հասնի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՉԷՍԿՕ ԿՐԻՍՊԻ

—

Հեռագիրը հաղորդեց, որ Նէապոլում երկարատեւ հիւանդութիւնից յետոյ վախճանվեց ներկայ դարի իտալական ամենանշանաւոր քաղաքական գործիչներից մէկը—Կրիսպի։ Նա ծնվել էր 1819 թուականին (Սիցիլիայում), ուրեմն նա 82 տարեկան էր։ Կրիսպի իր երկարատեւ քաղաքական եւ պետական գործունէութեան ընթացքում, որ տեւեց համարեա 60 տարի, մի անգամ եւս ապացուցեց այն տխուր իրողութիւնը, որ երիտասարդական իդէալներն եւ ձգտումները, փայլուն երազները համամարդկային եղբայրութեան մասին, դժբախտաբար, շատ ու շատ յաճախ մոռացութեան են տրվում եւ անհետ կորչում երիտասարդական տարիների հետ միասին։ Կրիսպիի քաղաքական գործունէութիւնը շատ որոշակի կերպով բաժանվում է երկու շրջանի։ Առաջին շրջանում—1840—1860 թուականներին—նա ամենալաւ ձգտումներով ոգեւորված ոչ միայն հայրենասէր էր, այլ նաեւ, ամենալայն մտքով, մարդասէր, ժողովրդասէր, ազատութեան անձնուէր զինուոր՝ այն ժամանակվայ իտալական նշանաւոր գործիչների, Գարիբալդիի, Մաձզինիի հաւասար։ Այս շրջանում էր, որ նա Գարիբալդիի հետ միասին արշաւանք գործեց դէպի Սիցիլիա եւ ազատեց այդ կղզին Բուրբոնների բռնակալութիւնից։ Այս շրջանում նա ենթարկվեց իր յեղափոխական եռանդուն գործունէութեան համար հալածանքի եւ աքսորի դէպի Ֆրանսիա, ուր ստիպված եղաւ մնալ 10 երկար տարիներ։

Իտալիայի վերջնական ազատութիւնից յետոյ Կրիսպի վերադառնում է Իտալիա եւ երախտապարտ սիցիլիացիների կողմից ընտրվում է իտալական պարլամէնտի անդամ։ Ահա այս ժամանակից սկսվում է Կրիսպիի գործունէութեան երկրորդ շրջանը, որ տեւեց մինչեւ 1897 թուականը եւ որ առաջին շրջանի բոլորովին հակապատկերն է կազմում։ Այս շրջանում Կրիսպի մոռանում է իտալական ժողովրդի իսկական շահերը. նա երազում է իր հայրենիքի արտաքին փառքի եւ ոչ նրա ներքին բարօրութեան մասին։ Իբրեւ մինիստր-նախագահ, ուրեմն իշխանութեան գագաթնակէտին հասած, նա շատ քիչ բան է անում իտալական ընդհանրապէս աղքատ ժողովրդի տնտեսական եւ կրթական վիճակը բարձրացնելու համար, այլ ընդհակառակը կապում է երեքպետեան դաշնակցութիւնը, որով ենթարկում է նրան երկար տարիներով միլիտարիզմի ծանր լուծին, որի տակ հեծում է Իտալիան մինչեւ այժմ։ Նա մաքսային պատերազմ է յայտնում Ֆրանսիային, Իտալիայի ամենամերձաւոր եւ ցեղակից հարեւանին, եւ դրանով անթիւ վնասներ հասցնում իտալական առեւտրին։ Իտալիայի ներքին գործերը մոռացնել տալու եւ դիտող աչքերը փակելու համար, նա պատճառ է դառնում պատերազմի Իտալիայի եւ Հաբէշստանի մէջ, որ վերջանում է իտալական զօրքերի խայտառակ պարտութեամբ։ Նա, վերջապէս, ընկնում է բարոյապէս մինչեւ այն աստիճան, որ սկսում է, օգտվելով իշխանութիւնից, իտալական պետական բանկի միջոցները գործ դնել լոգուտ իր անձնականի... Ժողովուրդը գիտէ պատժել իր թշնամիներին, ինչպէս եւ անչափ սիրել ու պատուել իր բարեկամներին։ Կրիսպի վայելեց թէ վերջինը եւ թէ առաջինը. նա մեռաւ համարեա մոռացված իր նախկին բազմաթիւ երկրպագուներից, փառաւորապէս թաղելով իր գործունէութեան երկրորդ շրջանում առաջին շրջանում վաստակած անունն եւ ժողովրդականութիւնը։ Միայն երդուեալ «կրիսպիականները», որոնք այնքան էլ բազմաթիւ չեն այժմ Իտալիայում, մեծ կորուստ կը համարեն Կրիսպիի մահը Իտալիայի համար։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, յուլիսի 10-ին

Ներկայումս այստեղ օրվայ հարցը քրդական աւազակութիւններն են։ Գաւառի ամբողջ ազգաբնակութիւնը, ահ ու սարսափի մէջ է. գլուխները կորցրած չը գիտեն ինչ անեն։ Գիւղացիները գիշերները կորցրել են իրանց քունը եւ հանգստութիւնը, ամեն մի բոպէ սպասելով քրդերի յարձակումներին։

Արդէն 10-ի չափ գիւղեր մինչեւ այժմ ենթարկվել են քրդերի թալանման։ Մի քանի օր առաջ 50—60 հոգի զինված քիւրդեր Դրիչկ գիւղի «չիժաններից» քշեցին տարան 67 գլուխ ձի։ Կառավարութեան կողմից ուղարկված ձիաւորները, նրանց յետեւից հասնելով, թէեւ մի քանի ժամ հետները կռուեցին, բայց իրանց սակաւաթիւ լինելու պատճառով՝ տարած աւարը չը կարողացան հետ խլել։ Կուի ժամանակ պարսիկների կողմից սպանվել է մի ձիաւոր, իսկ քրդերից 4 սպանվածներ եւ մի քանի վիրաւորվածներ կան։

Այդ դէպքի հետեւեալ գիշերը դարձեալ 80-ի չափ քրդեր յարձակում գործեցին Գիւլիչան գիւղի վրա. մի քանի ժամ անդադար շարունակվող կռի ժամանակ պարսիկների կողմից կրկին մի ձիաւոր սպանվեց։

Մինչեւ այժմ քրդական աւազակախմբերը գաւառի զանազան գիւղերից քշել տարել են աւելի քան 2000 անասուն։ Գիւղերի թալանման ժամանակ մինչեւ այժմ 15-ի չափ մարդ են սպանված։ Կառավարութիւնը ոչ մի միջոցի չէ դիմում այդ չարիքների առաջը առնելու, թողնելով այդ մինչեւ նոր դատաւորի գալը, որը մօտ օրերս գալու է։

Անցեալ օրը լուր տարածվեց, թէ սահմանից մօտ 400—500 թիւրքահպատակ քրդեր են անցել այս կողմը՝ Սալմասի գիւղերը թալանելու համար։ Եթէ այդ լուրը ճշդվի, այն ժամանակ Սալմասը բոլորովին կը դատարկվի իր ազգաբնակութիւնից։ Այժմ սալմասեցիները՝ այդ չարիքներից ազատվելու միակ յոյսը նոր նշանակված դատաւորի վրա է։ Տեսնենք, նա ինչ կանի։

Յուլիսի 1-ին, Փայջուկի դպրոցական դահլիճում, տեղացի սիրողների մի խումբ, առաջին անգամ, բարեգործական նպատակով մի ներկայացում տուեց։ Դերասանները բաւական աջող տարան իրանց դերերը։ Դահլիճը ամբողջովին լիքն էր հանդիսականներով, որոնք գոհ սրտով եւ ուրախ տրամադրութեան տակ թողին հեռացան թատրոնից։ Ինչպէս իմանում ենք, մօտ 450 դրան արդիւնք է եղել։ Ցանկալի է, որ Սալմասի հայ երիտասարդութիւնը աւելի զարկ տայ թատրոնին եւ յաճախ ներկայացումներ տայ։ Ինքը ժողովուրդը արդէն խիստ համակրանքով է վերաբերում դէպի թատրոնը։

Մի քանի օր առաջ Հաֆթուան գիւղում սպանութեան երկու դէպքեր եղան։ Զ. անունով մէկը, տեսնելով, որ գիւղում ապրող մի օտարական իր կնոջ շարունակ հետամուտ է լինում եւ մի քանի անգամ կեղտոտ առաջարկներ է արել, չը կարողանալով այլ եւս համբերել, գիւղի մէջ դաշոյնի մի քանի հարուածներով գետին է փռում իր պատիւը ոտնակոխ անողին։ Սակայն խեղճ Զ. ինքը եւս գոհ է գնում վրա հասած սպանված ենիչերիի ընկերների արձակած գնդակներին։ Կառավարութիւնը, եղելութիւնը իմանալով, անմիջապէս բանտարկում է գիւղացիներին եւ 300 թուման տուգանք է պահանջում, բայց վերջիններս մերժում են եւ գործը այդպէս մնում է մինչեւ նոր դատաւորի գալը։

Սիսակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պրինց Միրզա-Ռիզա-խանին, Թիֆլիսի պարսկական նախկին գլխաւոր հիւպատոսին եւ ապա Պետերբուրգի պարսկական դեսպանին՝ Կ. Պոլսի դեսպան նշանակելու լուրը, ինչպէս գրում են «С. П. Вѣд.» լրագրին, մեծ ոգեւորութեամբ ընդունվեց Թիւրքիայի մայրաքաղաքի քաղաքական շրջաններում։ Սուլթանը մի հեռագրով շնորհակալութիւն յայտնեց Շահին, որ նա Կ. Պոլսի դեսպան է նշանակել պրինց Միրզա-Ռիզա-խանին, մահմեդական ամենակրթված դիւանագէտներից մէկին։ Բանից դուրս է գալիս, որ սուլթանը անձամբ խնդրել էր այդ մասին Շահին, երբ անցեալ տարի նա այցելեց Կ. Պոլիս։ Այն բոլոր անձինք, որոնք ճանաչում են պրինցին, շնորհաւորում են իրար պրինցի գալուստը, որը, ինչպէս աշխարհիկ մարդ, պէտք է որոշեալ կենդանութիւն մտցնէ Կ. Պոլսի թմրած սալոններում։ Թիւրքական լրագիրները, որոնք զետեղեցին իրանց թերթերում Միրզա-Ռիզա-խանի պատկերը, միաբերան նախադուշակում են, որ նոր դեսպանի շնորհիւ աւելի սերտ յարաբերութիւններ կը հաստատվեն Թիւրքիայի եւ Պարսկաստանի մէջ։ «Այս երկու պետութեան փոխադարձ մերձեցումը,—ասում է «Մալիսմաթ» լրագիրը,—պէտք է ցանկայ ամեն մի մահմեդական։ Իսլամի կրթված որդիների վրա պարտաւորութիւն կայ աշխատելու միացնել ամբողջ մահմեդական աշխարհը, որը, եթէ շաղկապված լինի եղբայրական սիրով, կարող է մի այնպիսի ոյժ կազմել, որի առաջ կը դողայ ամբողջ աշխարհը»։ Ազատամիտ համարվող «Իկդամ» լրագիրը, թէպէտ եւ նոյնպէս, միւս լրագիրների նման, սուլթանի եւ նրա կառավարութեան մասին գովաբանութիւններից զատ ոչինչ չէ գրում, այնուամենայնիւ ողջունելով Միրզա-Ռիզա-խանի գալուստը՝ նկատում է, թէ Կ. Պոլսի պարսկական նոր դեսպանը, թողնելով Պետերբուրգում բարի յիշատակ, նոյն ժամանակ տանում է իր հետ եւ լաւ յիշողութիւններ, ուստի եւ անկասկած նա կը մնայ ռուսասէր։

—Հանգուցեալ նշանաւոր լեզուագէտ Մակս-Միւլլէրի յայտնի գրադարանը, ինչպէս հաղորդում են արտասահմանեան լրագիրները, դարձել է Եապօնիայի սեփականութիւն։ Այդ գրադարանը բաղկացած է 15,000 գրքից։ Նրան գնել է բարօն Իվասակի, ամենահարուստ եապօնացիներից մէկը, որպէս զի ընծայէ Տօկիոյի համալսարանին։ Գրադարանը, որ գնված է 36,000 իենով, Եապօնիա կը տեղափոխվի սեպտեմբեր ամսին։

—Անգլիական պատերազմական թղթակիցները մեկամաղձոտ տրամադրութիւն են ցոյց տալիս իրանց թղթակցութիւնների մէջ հարաւաֆրիկական գործերի վերաբերմամբ։ «Daily Mail»-ի թղթակիցը գրում է Պրետորիայից, թէ ձմեռը մօտենում է ահա իր վերջին, բայց պատերազմի վերջը չէ երեւում։ «Ի հարկէ, չը պէտք է յուսահատվել,—աւելացնում է նա,—բայց եւ այնպէս այս հանգամանքը չէ կարող վհատեցուցիչ ազդեցութիւն չը գործել»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 յուլիսի

ԲԱԳՈՒ։ Յուլիսի 29-ին, առաւօտեան 9 ժամին, Սաբունչիում, Բագուի նաւթային ընկերութեան քառասներորդ հողաբաժնում, հրդեհ բռնկեց. կրակը սկսվեց վիշկայից. այրվեցին 52 նաւթահորեր, որոնցից՝ երեքը Նոբէլ ընկերութեան, վեցը՝ Բագուի նաւթային ընկերութեան, մէկը՝ եւրօպական նաւթային ընկերութեան, երկուսը՝ Եղիազարեանի, երկուսը՝ Տէր-Յակոբեանի, հինգը՝ «Նաւթ» ընկերութեան, տասնմէկը՝ ռուսաց նաւթարդիւնաբերական ընկերութեան, երեքը՝ Լեսկովիչի, մէկը՝ եղբայր Կրասիլնիկեանների, եօթը՝ Աբիլեանցի, երկուսը՝ Հ. Մելիքեանի, մէկը՝ Սեւծովեան ընկերութեան, երկուսը՝ եղբ. Միրզոյեանների, մէկը՝ Կրասիլնիկեան ժառանգների եւ հինգը՝ Շագիդան'անի։ Բացի այդ՝ այրվեցին Ադամեանի եւ Բագուի «Ռուսաց նաւթ» ընկերութեան նաւթանցքները, Ադամեանի չորս ամբարները եւ բոլոր շէնքերը, Լեսկովիչի եւ ռուսաց նաւթարդիւնաբերական ընկերութեան ամբարները եւ ընակութեան շէնքեր։ Դեռ չէ հաւաստվել ոչ մի դժբաղդութեան դէպք մարդկանց հետ։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Տասներկու բօէրներ, որոնք անձնատուր էին եղել եւ զէնք էին ստացել անգլիացիներից իրանց անասունները պահպանելու համար, Ֆօլկսդրիֆից դէպի հիւսիս գրանվող մի ագարակում շրջապատվեցին բօէր զօրքերից եւ անձնատուր եղան՝ մէջներից մէկի սպանվելուց յետոյ։ Նրանցից հինգին Խրիստիան Բօտա դատի ենթարկեց, որի վճռով, ինչպէս հաւատացնում են, չորսին սպանեցին։

ՊԵԿԻՆ։ Արձանագրութեան ստորագրելու յետաձգութիւնը պէտք է վերագրել գլխաւորապէս Անգլիային, որ բողոքում է այն բանի դէմ, որ բոլորովին չնչին առեւտրական շահեր ունեցող պետութիւնները մաքսահարկերի վերաքննութեան համար կազմվելիք յանձնաժողովում նոյնպիսի ձայն են ունենալու, ինչպէս եւ Անգլիան։

ՀՕՄԲՈՒՐԳ։ Այստեղի ռուսաց եկեղեցում, որի հիմնարկութեանը եւ օծմանը ներկայ է եղել հանգուցեալ Վիկտորիա կայսրուհին, Վօլկիյ քահանան հոգեհանգստի կարգ կատարեց։

ՊԵԿԻՆ։ Դեսպանների վերջին նիստը աչքի էր ընկնում հաշտ ոգով։ Դեսպանները յոյս ունեն ստորագրել արձանագրութիւնը մի քանի օրից յետոյ, երբ հեռագրով բանակցած կը լինեն իրանց կառավարութիւնների հետ։ Մաքսահարկը կը սկսվի վերցվել ստորագրելուց երկու ամիս անցած։ Այսօր համաձայնութեան եկան, որ այն ապրանքները, որոնք կը բարձվեն մաքսացուցակը ստորագրելուց յետոյ տասօրվայ ընթացքում, չենթարկվեն նրան, երբ էլ տեղ հասնելու լինեն։ Մաքսը հաւասար կը լինի, սակաւաթիւ բացառութիւններով, ապրանքի գնի 5%-ին։ Մթերքների մեծ մասը, ինչպէս օրինակ ալիւրը եւ եգիպտացորենը, կը մտնեն 10%-նոց մաքսի հարցի մէջ։ Լիկինի վերացումը, երեւի, ապագայ բանակցութիւնների հարց կը լինի։

31 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն հրաման մասնաւոր անձանց Սիբիրում արքունական հողեր տալու մասին։

Պետական կօնտրոլեորի բացակայութեան ժամանակ, որ գնացել է ճանապարհորդելու եւ գննելու համար մի քանի պետական կօնտրոլային հիմնարկութիւններ, պետական կօնտրոլի կառավարութիւնը յանձնված է պետական կօնտրոլեորի օգնական Ֆիլոսոֆովին։

Զինուորական մինիստրը, Պետերբուրգ վերադառնալով, վերսկսեց իր պաշտօնավարութիւնը։

Յուլիսի 30-ին Կրանսօսելսկի բանակում Բարձրագոյն ներկայութեամբ եկեղեցական զօրահանդէս կատարվեց լեյբ-գվարդիայի պավլօվսկի գնդին, այն առիթով, որ այդ օրը լրացաւ քսանհինգ տարին այն ժամանակից, երբ այդ գնդի Նորին Մեծութեան բոլոր այի շարքերը մտաւ Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչ։

ՊԵՆԶԱ։ Այստեղ նորից հրդեհ պատահեց. այրվում է Լեկարսկայա փողոցը։ արդէն այրվել է մի ամբողջ թաղ։ Բոլորը միասին հաշուած, յուլիսի 27-ին, 28-ին եւ 29-ին պատահած չորս հրդեհների ժամանակ այրվել է աւելի՝ քան 120 տուն, որոնց թւում եւ տեխնիկական երկաթուղիական դպրոցը։

ՄՕՍԿՎԱ։ Յուլիսի 30-ին նահանգական դատարանում քննվում էր իր եղբօր ինքը տարեկան աղջկան բռնաբարելու եւ սպանելու մէջ մեղադրվող՝ վաճառականի որդի Սմիրնովի գործը։ Երդուեալ ատենակալները Սմիրնովին մեղաւոր ճանաչեցին, բայց սպանութիւնը ընդունեցին կատարված առանց նախամտածված դիտաւորութեան։ Դատարանը դատապարտեց Սմիրնովին տասներկու տարի տաժանակիր աշխատանքների։

ԲԷԼԳՐԱԴ։ Կրկնաքուէարկութիւնից յետոյ սկուպշչինան հետեւեալ կազմը ստացաւ—110 հոգի՝ կառավարութեան կուսակիցներ, 4 հոգի՝ անկախ արմատականներ եւ 6 հոգի՝ ազատամիտներ։

ՊԱՐԻԶ։ Տրուայում ձերբակալվեց մի սպանիացի, որ կասկածվում է այն բանում, թէ նա է ուզում դրել Սէն-Դիզիէ եկեղեցուը։ Ռումբը պայթել է կոնֆիրմացիայի սպասող պատանիներին տրվող դասի ժամանակ, եւ մեծ նիւթական վնասներ է պատճառել։

ՄԻԴԴԷԼԲՈՒՐԳ (Կապի գաղութ)։ Կրուսյինդէր, յետ մղվելով դէպի հիւսիս-արեւմուտք, թողեց հարիւր ձի։ Գնդապետ Կրաբբէ երկու ժամ տեւող ճակատամարտից յետոյ՝ կատաղի կերպով հալածեց նրան։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ «Danebrog»-ի ասելով, ռուսաց կառավարութիւնը այս օրերս վարձել է զանազան ընկերութիւնների պատկանող եօթ հատ դանիական շոգենաւեր, որոնք մասնակցելու են առաջիկայ նաւախաղերում Բալտիկ ծովափի ռուսական ջրերում։ Նաւերն արդէն գնացել են դէպի Ռէվէլ։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Ցեմպլինեան կօմիտատի Զիրօկա-Գոստումեցէ գիւղում իջաւ մի օդապարիկ, որի միջից դուրս եկան մի քանի ռուս օֆիցէրներ։ Արձանագրութիւն կազմվեց, որի մէջ մացրվեց օֆիցէրների ցուցմունքը, թէ նրանք կատարում են վարժութեան թռիչք։ Փոխ-ժուպանը հրամայեց հրահանգներ պահանջել բարձր իշխանութիւններից։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Օդապարիկով Զիրօկա-Գոստումեցէ իջած ռուս օֆիցէրները ճանապարհընկան Կասսա, քաղաքացիական զգեստ հագած ոստիկանական պաշտօնեայի ուղեկցութեամբ։

ԿԱՍՍԱ։ Երէկ օդապարիկով Զիրօկա-Գոստումեցէ իջած երկու թնդանօթաձիգ օֆիցէրները այս առաւօտ հասան այստեղ, ներկայացան քաղաքացիական ու զինուորական իշխանութիւններին եւ երեկոյեան ճանապարհ. ընկան դէպի Վարշավա։

ՆԻԺՆԻԳ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Սեմենովսկի, Բալախնինսկի եւ Գորբատովսկի գաւառներում մօտ երկու շաբաթ է՝ ինչ շարունակվում են անտառային հրդեհներ։ Այրվում են տորֆանոցները. հրկիզված տարածութիւնը անգդին է։ Բացի այդ, այրվել են մի քանի գիւղեր եւ ամարանոցներ. վտանգ էր սպառնում նաեւ Բալախնա քաղաքին, բայց անցաւ։ Անտառային հրդեհը ժամանում է Սորմովին։ Նախազգուշական միջոցներ են ձեռք առնված։ Այսօր Վոլգան թանձր ծուխ էր պատել, որի միջով ոչինչ չէր երեւում։ Շոգենաւերից մեծ մասը, մանաւանդ ապրանքատարները, կանգ են առել. միւսները գնում էին դանդաղ ընթացքով։ Մի քանի դէպքեր եղան, երբ նաւերը ծանծաղը մտան։ Բալախնայի գաւառը, ուր հրդեհը առանձնապէս վտանգաւոր է նախկին ցուցահանդէսային տեղի եւ Նիժնիյ-Նովգորոդի քաղաքային դրսի թաղերի համար, զօրքեր են ուղարկված եւ ուղեւորվել է նահանգի կառավարիչը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 30-ին մեռաւ գլխաւոր-լեյտենանտ Նիկոլայ Միխայլովիչ Բարանով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսումնարանական վարչութեան թոյլտուութեամբ, ներկայ տարվայ օգոստոսի 10-ին, բացվում է

ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
Ս. Յ. ԻԻԶԲԱՇԵԱՆԻ

նախապատրաստելու աշակերտներ պետական միջնակարգ դպրոցների ստորին դասարանների համար։

ԲԱԳՈՒՀ Հայոց փողոց, տ. Լազարեանների։
(չ.) 1—10

Սրանով յայտարարում եմ ի դիտութիւն յարգելի նուիրատուների, որ Թիֆլիսի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու բակում գտնվող (նախկին ծխական) տղայոց դպրոցի չքաւոր աշակերտների օգտին իմ հաւաքած քսանութ (28) ռուբլին յանձնել եմ դիրեկցիային։

Կրօնուսոյց՝
Ալէքսանդր քահ. Տէր-Յովհաննիսեանց
1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է, որ իր ատեանում, այս տարվայ օգոստոսի 4-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու մօտ 300,00 պ. սաժ., հատ. 0,375×0,25 եւ մօտ 25,000 պ. սաժ., հատ. 0,18×0,12 պ. սաժ. բէտոնէ ջրուղու շինութիւնը Կուրի ափից Նաւթլուղի ու Կախէթի խճուղով եւ Ցինոնդալեան փողոցով 8.500 ր. գումարի։ Աճուրդին ժամանակել ցանկացողները կարող են նայել պայմանները Վարչութեան Շինարարական Բաժնում բոլոր լի օրերը ցերեկվայ 8—1 ժամը։
1—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ

որ իր նախկին կրթութիւնը ստացել է Պետերբուրգում, աւարտել է կար ու ձեւի եւ խոհարարական ուսումնարանները եւ երկար տարիներ վարել է ուսուցչուհութեան պաշտօն, այժմ կամենում է վարել նոյն պաշտօնը Թիֆլիսում. համաձայն է գնալ եւ ուրիշ քաղաքներ։

Դիմել՝ Тифлисъ, Городская Управа, Василію Заварову. 2—3

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
„ՄԱՐԻԱՆԱ“
Դրամա 3 գործ. եւ վերջաբանով.
Խ. ԷՋԷԳԱՐԱՑԻ
Թարգմ. Արսէն Կրասիլնիկեանի

Այս հրատարակութեան վաճառման ամբողջ արդիւնքը յատկացնվում է «ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԱՆ»։

Գիրքը տպված է ամենաընտիր թղթի վրա, բաղկացած է 248 երեսից եւ արժէ 1 ռուբլի։

Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ», Лорисъ-Меликовская, № 11, Г. Галустяну.

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

երկու սեռի մանուկների համար։ Ընդունվում են երեխաներ պատրաստականի բոլոր բաժանմունքները եւ նոր բացվելիք առաջին (աղջիկների համար երկրորդ) դասարան։ Աշակերտների թիւը սահմանափակված է։ Դիմել օգոստոսի 26-ից։ Բեհբութեան (Նովո-Սադովայա) փող., սեփ. տ. № 29։ 4—20

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամահատված ծնօտների պրոթեզներ (резекціонные протезы).

Առաւօտեան 8—2 ժամ.
Երեկոյեան 5—8 »
Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16։
11—25

Всемірная Выставка въ Парижѣ 1900 г.
1-е. Единственный заводъ въ Россіи, удостоенный высшей награды—**золотой медали спеціально за коньякъ;**
2-е. **Золотая медаль за ликеры и водки.**

ГЛАВНАЯ КОНТОРА
Д. З. САРАДЖЕВА
ВЪ ТИФЛИСѢ.

Къ предстоящей выставкѣ въ Тифлисѣ приготовленъ новый сортъ столоваго вина по способу казенной монополіи и съ 20-го іюля выпущенъ въ продажу подъ этикетомъ:
„Сѣверное вино № 100“.
Вино это разлито въ монопольной (конусообразной) посудѣ: этикетъ на оборотѣ снабженъ надписью: **„Изъ ректификованнаго предварительно фильтрованнаго хлѣбнаго спирта собственнаго Владикавказскаго Винокуреннаго завода“.**
Съ того же числа выпущенъ въ монопольной же посудѣ особый сортъ вина пвдъ названіемъ:
(20 ք. 1 եւ 15 օգ.) „НАРОДНОЕ ОЧИЩЕННОЕ ВИНО“. 2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հաշուեցոյցով, 5) Տեխնոլոգիա, 6) Ապրանքագիտութիւն, 7) Թղթակցութիւն, 8) Առեւտրական օրէնքներ, 9) Առեւտուր, 10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժենէր-երկրաչափ։

Ո՛չ-պարտադիր առարկաներ
1) Ֆրանսիական լեզու—Է. Կ. Լիոզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Ի. Ֆ. Գրուզիկ, դաս. Թիֆլ. բէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա. Բրօն-Ֆօն-Բրէննէր.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար։

Մինչեւ օգոստոսի 10-ը խնդիրքները ընդունվում են դասարանների հիմնադրի մօտ՝ նրա բնակարանում, Միխայլովսկի պրոսպեկտ, № 71, իսկ յետոյ դասարանների դիւանատանը, Նիկոլաեվսկայա, № 88.
11—20

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ
ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Նիկոլաեվսկայա, № 88.

Խնդիրքների ընդունելութիւնն սկսված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին։ Դասընթացքը բաժանված է կիսամեակների։ Պարապմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ։ Վճարը ամբողջ դասընթացքի համար 60 ռուբլի։ Ընդունվում են երկու սեռի անձինք։

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ.
1) Հաշուապահութիւն
2) Բանկային գործ
3) Առեւտրական թուաբանութիւն
4) Թուաբանութիւն հաշուեցոյցով։
} Ի. Եա. Բրօն-Ֆօն-Բրէննէր, դասարանների հիմնադիրը.
5) Տեխնոլոգիա
6) Ապրանքագիտութիւն
7) Թղթակցութիւն.
} Մ. Ի. Զէնգէրի, լեռնային ինժենէր, պետական խորհրդական.
8) Առեւտրական օրէնքներ
9) Առեւտուր
} Վ. Ս. Մօսկալեօվ, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.
10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժենէր-երկրաչափ.

Ո՛չ-պարտադիր առարկաներ
1) Ֆրանսիական լեզու—Է. Կ. Լիոզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Ի. Ֆ. Գրուզիկ, դաս. Թիֆլ. բէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա. Բրօն-Ֆօն-Բրէննէր.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար։

Մինչեւ օգոստոսի 10-ը խնդիրքները ընդունվում են դասարանների հիմնադրի մօտ՝ նրա բնակարանում, Միխայլովսկի պրոսպեկտ, № 71, իսկ յետոյ դասարանների դիւանատանը, Նիկոլաեվսկայա, № 88.
11—20

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

1) «ՎՏԱԿ» հանդէսը, որ արժէ Թիֆլիսում 1 ր. 50 կ., քաղաքից դուրս 2 ր.։ Յատկապէս այս հանդէսի համար պատրաստվում են չքեղ եւ հմուտ կազմեր 40 կ., 50 կ., 75 կ. եւ 1 ր.։ 2) Վրթանէս Փափազեանի «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» գրքոյկը, որ Թիֆլիսում արժէ 50 կ., քաղաքից դուրս 65 կ.։—Յիշեալ երկու գիրքը ի վաճառ կը հանվեն գրաքննիչից իրաւունք ստանալուց յետոյ, մօտաւորապէս յուլիսի վերջին։ 3) Աչքդ Զիւանիի «Բեարաժ եւ Ասլիի» հէքիաթը, գ. 60 կ., քաղաքից դուրս 80 կ.։ Գումարով գնողներին զիջումն կը լինի։ «Վտակի» համար բաժանորդագրութիւնը Կենտրոնական գրավաճառանոցում շարունակվում է։

Դիմել՝ Тифлисъ. Центральная Книжная Торговля. 10—10

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. չ.) 13—25

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Іюля 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.